երբ որ Լեհացւոց խնդրոյն համար ապարդեղ մնալու վրայ կը տեսնուէին։ Այնուհետև պիտի դայ Բրուսիոյ թագաւորը, անիկայ որ առանց տասն օրուընէ 'ի վեր Լոնտրա եղած բանակցութեանը, թերևս այս վայրկենիս պիտի քալցընէր իր դունդերը գաղղիական սահմանագլխոց վրայ, պատրաստ ահաւոր կռիւ մը բռընկցընելու, որուն քով Պոհեմիոյ արիւնահեղ պատերազմը տղայոց խաղալիկ պիտի ըլլար. Հոլանտայի թագաւորն ալ նոյնպէս պիտի դայ, անիկայ որ կը ներկայացնէ Նասսաւի ընտանիքն որ Ստորին–Նահանգաց ամենէն մերժեց Նաբոլէոն Գի հայրը։ Անկէ ետքը կարգը Աւստրիոյ կայսեր պիտի դայ, որուն հետ ութ տարի առաջ մահուչափ կռուի մը մէջ էր Գաղղիացւոց կայսրը։ Վերջապէս – և ասիկայ նուազ հետաքրքրական մասնաւորութիւնը չէ – Ցաճկաց սուլդանն ալ պիտի տեսնուի հոնտեղ, որուն նախորդները դարերէ 'ի վեր արևմուտք այսչափ առաջ եկած չեն . . . ։ Այս ամէն թագաւորները մի և նոյն ժամանակ պիտի չհանդիպին իրարու Գաղղիոյ մայրաքաղաքին մէջ։

Ամենուն ալ յայտնի է որ այս վեհապետները հասարակաց միտքի համար չեն գումարուիր, և ուրիշ կողմանէ մասնական ժողով մը կրնար անանկ կասկածներու և ենթադրութեց տեղի տալ որոնցմէ զգուշանալն աղէկ է։

Թագաւորները այսպիսի կարգաւ մը Բարիզու այցելութեան երթալով, կը ցուցնեն թէ ամէնքն ալ գոնէ մէկ կէտի վրայ մէկ սիրտ մէկ հոգի են, այս ինքն Նաբոլէոն կայսեր իրենց բարեկամութիւնը յայտնելու փափաքին վրայ։ Աշխարհի խաղաղութեան համար մեծ վստակ մ'է ասիկայ. բոլորովին անօգուտ է և չենք կրնար ալ փափաքիլ որ այս միտքիկը կերպով մը յիշեցնէ մէկ կողմանէ Դիլսիդ 1807ին և միւս կողմանէ Բարիզ 1814ին։

ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՈՒԱՐ ՃԻՑԷՐՃԻ ՕՂԼՈՒ ՓԱՀԱՆԱՑԻ

(Տես երես 129, 180։)

Ի մոանեղն սուրբ Յակոբայ երկոքումդունէն 'ի ներս՝ ձախ կողմն փոքր սէր մի, որ հանապազ անդ ծախէն զմոմն ժողովրդեան. ունի սիրուն բակ և ունի պօրմէ տղրապրզան[1] և երկու դուռ որ մեր հետ տարաք. և անդ է ջուխտակ կոչնակն. և է Մորայ քով փոքր քէմէր դուռն մի և սորայ ներս տեղն բարձրառնեմք[2] օտան. և սորայ կից սուրբ էջմիածնայ դուռն, որ կանայք անտից գնան եկեղեցին. և միուս կողմն կոչնակին՝ սիրուն փոքր դուռ մի, որ հանապազ գոց է բայց 'ի հանդիսի աւուր կու բանան զնայ։ Եւ սորայ քով պատին երեսն փոքր խորան մի որ անունն կոչի սուրբ Գէորգ. այս խորան. եթէ կամիս հարցանել զպատճառն ասեմք փոքր 'ի շատէ. ժամանակաւ կամեցեր են թէ զՍ. Յակոբ յափշտակել 'ի ձեռաց Հայոց ազգիս. ոմն թագաւոր՝ որ մէլիք Սալէհիտին կոչիւր, անց կ'առնէ թէ կամի գնալ պատերազմ. սոյն Ցաճկունքըն իրրև կ. շ. հ. թէ թագաւոր այս ինչ աղէկ ճամի կու լինայ ասելով. և սայ կը մօհրէ զդռներն. երթամ պատերազմ և գամ տեսանեմ թէ կանթեղու վառ մնայ նէ Հայոց ազգին կու տամ. թէ չէ նէ՝ ճամի կու չինեմ. մինչ նայ գնայ և գայ՝ այս վերոյ գրեալ խորանն ժամ կ'անէին մինչև 3 տարի. յետ 3 տարոյ գալն թագաւորին մոռացեր, կամի թէ անցնի գնայ. ևս կրկին այն առաջիններն միտքըն կու ձգեն թէ թագաւոր դու ինչ պայման արիր, ահա կու գնաս հայ 'ի նորա այլ միտքն կու դայ յետ կու դառնայ կու գայ դուռն Ս. Յակ. նայ կու տեսանէ որ երեք այր լուսաւոր

1 Տախտակ կամ սեղան։
2 Սեղան օրհնելու աղօթքը։

շապիկ զգեցեալ ձեռքին մոմ՝ Թագաւորին առաջնէ կուգնան սուրբ Յակոբայ Ներսի դուռն, և Թագաւորն կու տեսանէ զկնիքն որ իւրն է 'ի մէջ ամբոխին կու բանայ զդուռն և կու մտանեն ներս. այսր և անդր հային որ երեք կանդեղ վառ կայ. որ սարդն 'ի վերայ կանդեղին հովանի է եղեր. և արքն այնոքիկ անյայտ կու լինան. և Թագաւորն կ'ասէ Թէ ուր են այն երեք արքն որ առաջի իմ սպիտակ զգեստիւք և մոմեղինօք կային, այժմուս ոչ երևան. և միաբանքն կ'ասեն Թէ ով Թագաւոր ոչ ոք չիկայ 'իմիջի մերում քո ասածն. և ոչ ոք մոմ վառեց կամ զգեստիւք կայր. Թագաւորն իմաստուն դոլով ասացեր է. Թէ այս մանուտրս որոյ անուան է կառուցել. զնորա պատկերն ինձ ցոյց տուէք՝ և միաբանքն ցոյց կու տան սրբոյն Յակոբայ Ցեռուն եղբօրն, և զլխադիրն որդւոյն Զեբեդեայ և մակար ճգնաւորին. իսկոյն ճանաչէր Թագաւորն Թէ սոքայ էին որ առաջի իմ զգեստիւք և մոմեղինօք գային. և ամենեքեան փառս ետուն Աստուծոյ և սրբոց նորա, և Թագաւորն գրեալ նոմոս 'ի վերայ քարի և եղեալ ճակատ դրսի դռանն. ևս նալլէթլէմեով Թէ ոչ ոք չիհակառակի սորայ. Հայոց ազգէն մինչև մէկ պառաւ կին մնայ նէ նորա լիցի. և հակառակ սորին ամենայնիւ յետս չոգան և խայտառակեցան։ Եւ այժմուս ոչ ոք կայ կերպարանօք Հայ ձևացեալ և են գայլք ափշտակողք լինիցին և նոքայ ամենայնի աստ և 'ի հանդերձելումն. ամէն։

Եւ 'ի մտանելն 'ի ներս որ է մեծ և ահագին. և է սրբոյն Յակոբայ երկայնութիւնն 37 ատրմ և լայնութիւնն 25 ատրմ. դասին մէջի լայնութիւնն 22 ոտք է, չորս սիւն ունի. ամէն սիւնի հաստութիւնն 28 թիզ է, և պատուանդանն 32 թիզ է, բարձրութիւնն քան զչափն աւելի է. ունի զուպէ մի բարձր և մէջ տեղն 6 քէմէր զէնիիլլարէ որ կայ օրինակն 'ի մէջ տեսրիս. և ունի 6 պատուհան. և մէջ քէմէրին բոլոր երկաթ բէնիներէ մի և ունի տասն ջուխտ բարակ մէրմէր տիրէկ, և աւագ խորանն՝ տապանն 26 թիզ է. երկու կողմն երեք երեք աստիճան է. վրայի լայնութիւնն 38 թիզ է. ճակատ խորանին 22 ոտք է, աջ կողմն խորանին սուրբ Յովհաննու խորանն է, սոյն սրան[1] աւանդատունն է, ունի մէջն երկու խորան, մէկն Ստեփանոսի է խորան, և միւսն սուրբ Լուսաւորչի խորանն է, և սորա կից որ յետոյն է՝ կայ մեծ փէքէ մի մութ տեղ, և անդ շարեն զդալեատանն կայ մինչև 50 խոշոր և գոյնզգոյն. բարակն զատ և դապան զատ անդ են եղեալ։

Եւ կայ սորայ քով նեղ ճամբայ մի որ գնաս ներս. անդ է ձիթատունն. համարեցի մինչև 17 քուբ, թող զմանտրերն. և կայ մէկ օտայ այլ որ խոշոր մնտուկներ են դրեր, և 'ի միջի սոցայ կանդեղ ցեղցեղ. և ունի լուսամուտ մի. և այս աւանդատնին դրանն վրայ ամպիոնն է, կաթուղիկէով. աստ կարդան զաստուածն և կայ քոմն կախեալ սիրուն մեծ սահաթ մի բանտուլ. և վերան շապիք. և սորայ վրան բարձր տեղն կայ խորան կազմեալ և կայ անդ կենաց փայտն։ Եթէ կամիս եղբայր սակաւ մի պատմեմք զսորայ աստ գալն, 'ի ժամանակի այնմ, որ Կիրիտ առեր են 'ի ձեռաց Յունաց՝ զեկեղեցիքն Թալաներ են. լուսարարն միտ կ'անէ Թէ ինչ առնեմ հետ՝ որ ափուցէս[2] չառնուն. ևս այս միտ կ'անէ, կ'առնէ զսայ և կու դայ յերուսաղէմ. և իշխանի Յունաց վանք. յետ սակաւ աւուրց կ'ասեն սորայ, Թէ մարդ, դու այնպէս տեղաց եկիր, էր դատարկ եկիր, ասելով արտաքսեն զսայ 'ի վանիցն. սայ ևս կը խորհի Թէ ուր գնամ. ապա 'ի միտ ածէ Թէ Հայոց վանքն երթամ։ Ունք[3] կու հակառակին։ Ապա կայ սուրբ յարութեան քոմն շեխ մի որ և անունն Շեխ Մէֆա կ'ասեն և ունի պատուհան տանն որ սուրբ գերեզմանին վրայ կու հայի. կերթայ նորա տախիլ

1 Այս կարգիս մէջ։
2 Ձեռքէս։
3 Յոյնք։

կուլինայ [1]. նայ ևս դափուձի կ'անէ զինքն մինչև 15 տարի ղզմէթ կ'անէ. սորայ վաղճանն կու հասանի. ձայնէ զչէխն զայն քոմն. նա ևս խորհի թէ այս չափ ժամանակ է ղզմէթ կ'անէ նորայ. հախն վերաս չմնայ ասելով կերթայ սորայ քոմն. 'ի գնալն տեսանէ զնա խեղճն. լալով կու խնդրէ՝ քոմս եկ. նա այլ կու մնտենայ. կը բռնէ երկու փողպանն [2], ասելով թէ երկու խնդրուածք ունիմ քեզանէ, յետ անցման իմոյ պիտի կատարես. մէկ որ զիմ մարմինն Հայոց վերցընել տաս. միւսն այլ՝ առ զայս ամանաթս և տուր Հայոց վանքն. կ'ասէ, կու աւանդէ զոգին։ Կու լսեն Ունքն, ոտից կանգնին թէ մեք կու թաղեմք զսայ քանզի Հոռոմ է և մեր ազգն է։ 'ի ժամանակս լուսաւոր հոգի Եղիազար կաթուղիկոսին ժամանակն էր. նայ այլ կասէ թէ նոքա թաղեն. յետ թաղմանն այն վերոյգրեալ շեխն շտկի Եղիազարին քով կու գայ. կ'ասէ թէ այն մարդն ինձ երկու պատուէր ետուր. մինն թէ Հայք թաղեն, դուք ևս չթաղեցիք. միւսն ևս այս է թէ այս ամանաթս Հայոց վանքն տուր, ահա բերի առ քեզ, տես թէ ինչ է։ Նա ևս իմացեր է որ կենաց փայտն է. յետոյ ասացեր է հոգևոր տէրն թէ սայ պարտիմք փորձել. կրակ կու վառեն և կենաց փայտն մէջ տեղն կու դնեն, ժամ մի բոլոր. յետոյ դուրս կու հանեն՝ տեսանեն որ նուան հատի նման և չէ այրեցեալ կամ նուազեալ գոյն, նոյն գոյնն մնացեալ, դառնայ շեխն կ'ասէ թէ հոգևոր տէր, պէնիմ պաղչիչիմի վերմէլիսին. մինչև հազար ոսկի կու տայ, ճորով կ'առնէ ձեռացն. ապայ կու տայ Մինաս վարդապետին. թէ քո վիճակիդ ելաւ. նայ այլ կու բերէ Ըստամպօլ, զարդարել. 'ի մէջ պիլլորի, և արծաթեղէն խաչով ակներ պատուականով և ոսկիէ ջրով, մինչև 500 ղուռուշ ղարճէր։ Եւ է այժմուս վերոյգրեալ ամպիոնին վերայ կաղմեալ խորանն. և եղիցի անբարբառ բարեխօս ամենայն հաւատացելոց քրիստոնէից. ամէն։

Մէկ քիչ յառաջ գնաս գլխադիրն է. և ունի կաթուղիկէ և գլուխն մեծ խաչ. վերն 12 արծաթ կանթեղ. մէջ տեղն հինգ կանդեղ, վարն դրան վրայ երեք կանթեղ դուռն առմ սէտէֆկեարի. և երկոյ դուռն մէջ տեղն մուշապահ [1] վարդի նման։ Գլխադրին մէջն հանապազ կու վառի չորս կանդեղ, որ երեք կողմն թել դափէս է հիւսած. իսրահն գլխադրին 5 թիզ և կէս, և է ճակատն չորս թիզ. և մէջ տեղն սումախի քար. և ունի շրջապատն արծաթ սփռեալ և 'ի վերայ արծաթի քար կաղմեալ 16 հատ, ոմն փէրիւզէ, ոմն կանանչ, ոմն կարմիր, և այլ գոյն զգոյն. և սորայ վերայ սեղան. և ատ մէկ կանդեղ կու վառի. գլխադրին երկայնութիւնը վեց ոտք և լայնութիւնն եօթն և կէս ոտք։ Այս այն տեղն է ուր որ սուրբ Աստուածածին նստեալ էր երկու կանամբ. և մինչդեռ զայն խորհէր թէ սուրբ Յակոբայ զենչ լինելոց է, յայնմ ժամանակի Հերովդէսի ձեռքն էր. և մէջ Նապուլուսին և 'ի մէջ Եաֆային կայ գիւղ մի որ և անունն Ղաղուն կոչի, անդ գլխատեց զսուրբն. և Աստուածածին վարանեալ կայր (!). անկարծակի ետես զի հրեշտակ բարձրեալ զսուրբ գլուխն եդեալ 'ի մէջ դաստառակին և բերեալ եդ առաջի սուրբ Աստուածածնի. և նայ յորժամ տեսեալ՝ ուրախացաւ և եդաւ պատուով այսմ տեղի. որ այժմուս կոչի գլխադիր, որ յետոյ շինեալ են թագաւորք։ Եւ միւս կողմն ունի փոքր դուռն. և է սորայ քով սուրբ Յարգիս որ է սուրբ Յակոբայ զաղնան մեծ. սիրուն խորան, և չորս կողմն գամեր գամած, որ գաւազաններն անդ կախեն. մինչև 38 համրեցի. մէկ կողմն խոշոր տոլապներ, որ անդ է պատուական ծանոր զգեստներն. և բարձր քէմէրով երկայնութիւնն 14 ոտք և լայնութիւնն 12 ոտք. և կայ մէկ դուռ մի այլ որ մը

1 Մաերմանալ։
2 Եաքա։

1 Վանգակակերպ. գոգէ- գոգէ։

տանք ներս. լուսարարն, ես մեղաւորս և Սուքիասն. ներսն կայ մեր պահարանեն չափ տեղ մի և անդր կախեալ խոշոր մոմեր. և արծաթեղէն պաբալ բաներ. և կայ նեղ փատէ մէրտիւէն մի տասը ոտք. ելանք 'ի վեր ևս կայ անդ ներքնոյն չափն տեղ, մնտուկներ և տոլապներ. մի մի բացաւ և մեք թամաշա արինք. և ունի լուսամուտ մի. յետոյ վար իջաք. ելաք՝ դուրս, փոքր տեղ մի փոքր դռաւ առաջեւն. և սորայ վերայ գրեալ սուրբ Սարգսի պատկեր մի ահագնատեսիլ և զարհուրելի, և որդիակըն Մարտիրոս 'ի յետին ունելով. և սորա կից է Մակար ճգնաւորին գերեզմանը. որ անդ լինի խոստովանութիւնն. և կայ երկու կանդեղ, մինն հանապազ վառի, միւսն դիշերն սաղմոս ասած ատենն կու վառեն. փոքր պատուհանն է, և ունի երկու դանատէն դուռ. և յորժամ խոստովանահայրն յորդորէ և բան հանելու լինայ՝ զկանդեղն շուտով վայր իջեցընէ. 'ի ժամ խոստովանութեան այս դուռն կու գոցեն. և այս դրան վերա կայ գրեալ. Մակար ճգնաւորին պատկերն, որ և հրեշտակն կերակուր բերէ իւրեան. և այս երեք դրանն քով ունի վեց մարմարիոնեայ սիւն փոքր ըստ մարդոյ չափ, բարակ նախշուն. և ունի գլուխն շէմիտան որ մոմ կու վառեն. և ունի գլխադրին երկու կողմն երկու ջուխտ վարախլը մոմ որ հանապազ 'ի մէջ Տեարպէքիր կարմիր կտաւի մէջ է. բայց տէրունի տոներուն կու բանան. կանդեղներն ևս կու աւելցընեն. աւագ տոներուն զարդարանքն կու աւելցընեն։ Որդւոյն ուրոտման տօնին ուսխախ կու բռնեն չորս խոշոր կերոն առաջեւն կու շարեն և խոբան զարդարեն, որչափ աղնիւ խաչ և աւետարան իսկիհ, թագ, երկու կողմն ընռաֆներով շէշիտ շէշիտ. և որք տեսանեն և կու մայլին և յետ սորայ յիշատակն աւագ խորանն կու դնեն երկու սարկտւագ բուռվառով, և ձախ ձեռքովն տապանակով. 'ի սրբասացութեան ժամանակին չորս քահանայ ըզգեստիւք և սաղաւարտով ամպհովանոյն չորս ալրրիսքն կու բռնեն, և է դպրապետ տիրացու Արութի. խաչալէմներն՝ առաջեւէ, և դպիրք ջուխտ ջուխտ. զանկակներ, ցընդակներ, երեք տեղ սէտ ձատէ հազրր սիռեալ կայ. այնչափ եղանակ՝ որ հրեշտակաց բարբառէ. երկու կողմն քաղաքացոց տղաքն որ միաբան ձայնակցին, կանչելով Լուսոր լուսաւորիչին է, օրհնեալ է Աստուած». եարան դումպէթն կաթողիկէ՝ ձայնն շատ, այնչափ կու խօսի որ մարդ չգիտէր թէ զինքն ուր տեղ է. մինչ 'ի մի ժամ՝ սրբասացութիւնն անճախ լըմընցաւ. և զայն օրպիսի է. — այն քո մըտացդ իմացիր եղբայր։

Եւ անտի 'ի վայր եկեղեցնայ դուռն է. որ անդ էր Պապոյ չէլէպուն նստած տեղն։ Անդ է սուրբ Նշանի ճանապարհի տեղն, որ է դուռն և կա մինէ լուսարարք. և աստի կու ելանեն 'ի վեր. և անտի դուռն միուս կողմն. և է պատկեր Եղիազար կաթողիկոսին. և կայ առաջեւն սիրուն հոր մի, որ ղուպպէին անձրևէն ղայրի ջուր չի մըտներ 'ի նա. ան ջուրէն կու խարճեն բարձր առնեմի. և յետ գնալուն ըխտաւորաց նայ ջրով կու լուանան եկեղեցնայ մէջն. և կու վախիս թէ տախտակ է կու փըտտի. սպիտակ սեաւ կանանչ սիրուն մէրմէր քարեր. թէ մէկ օխայ ձէթ թափիս և կամենաս թէ ժողովել՝ 399 տրէմն կու ժողովես և մին այլ զայ չի լինար։

Յետ դառնամք դամք Մ. Յովհաննեսու խորանին վերոյն. մեծ պատկեր մի որ սուրբ Աստուածածին հետ Յովսէփայ գնաց առ տունն Զաքարիայի և ել Եղիսաբեթ ընդդէմ նորա, և ետ ողջոյն Եղիսաբեթ, խաղաց ցընծալով մանուկն յորովայնի նորա. վերոյգրեալ Պապոն թէրճիմանութեան ժամանակին քաշել տուեր է. նայ այլ սուրբ Յակոբայ ապրանայն է. և կայ սորա քով Գաբրիել հրեշտակապետի պատկեր, ահագնատեսիլ։ Ի դիմաց կաթողիկէին — այլ կողմն դասին գլուխն է կաթողիկէն, և սուրմատէֆքէահի, և ունի գաղաթն մեծ արծաթ խաչ մի, և զատի-

ՓԷ ծածկոցով ծածկեալ կայ. բայց ա-
ւագ տօնից կու բանան մինչև 'ի մեծ
բարեկենդանին. զատկին ևս կու բա-
նան։ Գամք սիրելիք սրայով. և է ա-
ւագ խորանին վերի ճակատն վեց քէ-
մէր եալտրզլը, երեք մի կողմն երեք
այլ միւս կողմն. 'ի միջի սոցա Քրիս-
տոսի խաչելութիւնն, ձախ կողմն վարի
դին երեք պատկեր. մինն սուրբ Լու-
սաւորչի, և մինն Ստեփանոսի և միւսն
Յոհաննու աւետարանչի. և 'ի յաջ կող-
մին սուրբ Աստուածածին, Յոհաննէս
Մկրտչին և Սեղբեստրոսի հայրապետին.
և 'ի միջի սորայ խաչելութիւնն Քրիս-
տոսի. կանանչ եափրախներով և ոսկի
եալտուզով. երկու կողմն քէմէր և 'ի
ներքոյ ոտիցն վիշապ որ կայ 'ի բե-
բան նորա մեծ խնծոր մի եալտրզլը,
որ նշանակէ Եւայի խաբուիլն, և 'ի սո-
րայ ներքոյ Ադամայ գլուխն. և վերըն
խաչելութեան աջ կողմն՝ հայր Աբրա-
համ և իւր որդին Սահակ. և ձախ կող-
մին Մովսէս և Եղեա ըստ վկայութեանն
Քրիստոսի. և վերն քէմէրին մէջտեղն
դաստառակի պատկեր դամած է։ Ի-
ջանենք 'ի սեղանն որ է երրորդութե
պատկերն. որ սուրբ Աստուածածին 'ի
մէջ տեղն գլխուն վերևը Հոգին սուրբ
աղաւնակերպ, և աջ կողմն որդին իւր
միածին՝ որ զպայրահան 'ի ձեռին ունի
և ինքն մերկ, և ունի նշան բևեռաց. և
ձախ կողմն Հայր Աստուած ահեղա-
կերպ և իսեալ կերպարանօք և 'ի ձե-
ռին աշխարհ։ Այս մէջ տեղն է. և աջ
կողմն սուրբ Լուսաւորչի պատկերն, և
ձախ կողմն Ս. Յակոբայ պատկերն, որ
խակիհն 'ի ձեռին ունելով նշանակէ թէ
կարող եղև ըմպել զբաժակն զոր ասաց
Քրիստոս. և ունի աստիճան 12. յոր-
ժամ տէրունի աւուր զարդարել կամ-
նան՝ մէջ տեղն վարագուր քաշեն. ա-
ւուր առաջ չորս օր կու սկսանին զար-
դարել որ գոյն զգոյն պապէ պա-
պէ. և երկու կողմն աւագ խորանին
կից էյրէթի խորան կու շինեն. որ կու
լինա երբ մէկ իքտիզա անէ որ պա-
տարագ լինա ըսպաս և ուրիշ խորան
կու դնեն զիրա զարդարանքէն աւագ
խորանին յետևն չի անցվիր և ունի խո-
րանի շրջապատն 12 առաքելոց պատ-
կեր. և երկու կողմն Հայրապետաց պատ-
կեր փառաւորապէս. և ձախ կողմն դրը-
սի դին սուրբ Աստուածածնայ պատ-
կեր հրաշագործ, որ և վերոյ գրեալ.
Գաբրիէլ հրեշտակապետն աւետիս է
տուեալ։ 672 թվին (1223) ոմն Պօղոս
վարդապետ ունի աշակերտ մի սրբա-
կրօն եղեալ, անկարծակի 'ի մէջ գիշե-
րին կանդեղ վառելն 'ի բաց ձայն կու
ելանէ 'ի պատկերէն Գաբրիելի ասե-
լով, ողջոյն ընդ քեզ Մարիամ. և միւս
պատկերքն նոյն ձայնով միահեղուն[1]
ձայնակցին ընդ Գաբրիելի ասելով ող-
ջոյն ընդ քեզ, Մարիամ, լի շնորհաք,
ուրախ լեր բերկրեալ տէր ընդ քեզ.
և սայ կու զարհուրի, կ'ելանէ արտաքս։
Եւ թէ չես հաւատար եղբայր, կայ
Յայսմաւուրքի մէջն, ապրիլի եօթին
գիտ և կարդայ որ ստուգն իմանաս։
Եւ է սորայ քովն երրորդութեան պատ-
կերն 'ի մէջ քէմէրին. և 'ի ներքոյ սո-
րայ խորան սուրբ Աստուածածնայ, որ
ես մեղաւորս սորայ դիմաց կու կանգ-
նէի հանապազ և է պանչելագործ. բա-
րեխօս լինա ամենայն հաւատացելոց
քրիստոնէից։ Եւ է սորայ սրան սրբոց
առաքելոցն Պետրոսի և Պօղոսի ճանա-
պարհն. ելանէ վեց ոտք էյրէթի տախ-
տակէ մէրտիվէն. և վեր ելնելն սիրուն
փոքր դուռ որ կու ելանէս 'ի վեր 23
ոտք է. մէկ մարդ մի անճախ հանգիստ
կու ելանէ. եթէ դիմաց մարդ դայ. եայ
նայ յետ կու դառնայ, եայ դու ելար
վեր, դնա Պետրոսի առաքելոյն խո-
րանն, որ սուրբ Յոհաննու խորանին
վերայ է. երկայնութիւնն ութը ատրմ.
լայնութիւնն եօթը ատրմ, և անդ կայ
երկու տօլապ որ մէջն մեռոն է կիս-
կիսմեներով. յետ դարձիր և գրեայ. ու-
նի 12 ոտք մէրտեվէն. այս տեղս նեղ
ճանապարհ մի, երկայնութիւնն տասը
ատրմ մէջ տեղն սուրբ Յակոբայ ղուպ-
պէին վերայ ելանելու դուռն է, ձախ
կողմն ունի 13 ոտք մէրտիվէն որ կու

1 Միաձեղ։

իշանես սուրբ առաքելոյն Պօղոսի խոսրանն. որ սուրբ Աստուածածնայ խոսրանին վերան է. երկայնութիւնն ութը ատամ և լայնութիւնն եօթը ոտք, երկուսն մի չափ է և ունին յետոյսն մի մի պատուհան։ Դամք 'ի տունի սոցա. ժամարարն երկու, սպասաւորն ութը չորսն մի կողմն, և չորսն մի կողմն. մէկ Պօղոս անուն, և մէկ Պետրոս անուն, մէկ մէկ խորան կու կանգնեն. որ աւետարան համբուրելու համար. դպիրք վարն կու կանգնին. երկու ժամարարն ձայնաւորն նօպէթով կ'ասեն. մինն ձայնով ասէ և միւսն խորհրդաբար. նոյնպէս միւսն. և դպիրք երկուսին այլ դպրութիւն կ'անեն, եայ խորան, այս օրս բուռվառ առնող սարկաւագն՝ թէլ՝ էր տահրնմիշ թող լինայ, վեր ելնելն կամ՝ վար իջնելն քանի քանի հեղ ասա էիր և տեսեալ էիր. լինայ եղբայր Աստուծով դաս և տեսանես. ամէն։

Վար իջնես այս մէրտիվէնին քով կայ սուրբ Էջմիածնայ դուռն, որ մեք Ստամբոլու հետ տարաք, մնհտեսի Ղանտիլին շինածն է, սիրուն գեղեցիկ տօղրանայ. հին դուռն հանեցին և այս դուռն նորա տեղն դրին ըռահտով. և կայ առաջևն տրապզան դուռ մի, որ կու գոցեն թէ կանայք այս կողմն չի անցնի. և 'ի մնանելն սուրբ Էջմիածին. և է երկայնութիւնն 37 ատամ. և լայնութիւնն տասը ատամ. խորանին լայնութիւնն 28 թիզ, բարձրութիւնն հինգ թիզ և չորս մատ է. քան զսուրբ Յակոբայ խորանէն չորս մատ բարձր է. լայն և արձակ է, և սեղանն նոյնպէս. և վերան կաթողիկէ, և յետոյսն լուսամուտ մի և խորհրդանոցն ևս ունի կաթողիկէ, և առաջևն ջահ երկաթէ. և կայ աստ պատկեր մի տասնուվեց պօղմէ, տնօրինականքը՝ Քրիստոսի որ Ստամպոլ սուրբ Նիկողոս եկեղեցնայ է գնացեր՝, և կայ անդ ձախակողմն փոքր պահատան և վերան կիրով կաթողիկէ. և կայ 'ի միջի սորա երեք քար. և հարցանիս թէ ինչ է պատճառն. Ծանուցանեմ քեզ եղբայր. յետ յարութեանն Քրիստոսի սուրբ Աստուածածին երբեմն փոքձութեան լեառն և երբեմն գետ Յորդանան, և երբեմն Սինէական լեառն շուրջ գալով կու մխիթարուի եղեր, յետ ժամանակի ինչ ծերացեալ աստ նստեալ անկարծակի աւուր միում հրեշտակ ամենակալի երևեալ սուրբ կուսին և զիարքրլի հարցեալ թէ զի կաս ով տիրածին կոյս և նայ զայս ասելով առ հրեշտակն, թէ երբեմն փոքձութեան լեառն և երբեմն գետ Յորդանան և երբեմն Սինէական լեառն գնայի, և անդ մխիթարուէի, այլ այժմուս ոչ կարեմ գնալ. և հրեշտակ Աստուծոյ նոյն կէտն այս վերոյ գրեալ երեք սուրբ տեղեացն այս երեք քարն կու բերէ այս տեղն կու գնեն որ սուրբ Աստուածին հանապազ 'ի սոցա հայելով կու մխիթարուի, աստ լինի պատարագ երեքշաբթի օրն յետ պատարագաց որ ժամարարն խորանէն վար իջնելն աւետարարն կու ընթեռնու, վարդապետք պար կու առնեն. և յետ վճարմանն համբուրեն զաւետարանն և ապա գան զայն երեք քարն համբուրեն. ապա քահանայք և ժողովուրդք արք և կանայք, ծերք և տղայք. և ապա երթան խաղաղութեամբ ամենայն ոք իւր տեղին. և լուսարարքն գոցեն զդռրունս, մինչ 'ի յետ ժամու կոչնակի։

Եւ դամք եկեղեցնա դուռն. վերան մեծ հալխայ մի երկու օխայի չափ թուճ. իրիկուան ժամուն կէս սահէթ յառաջ լուսարարն կու ծեծէ զնա, որ միաբանք ամենայն վայր կու գան եկեղեցին և սկսեն 'ի նեղութեան կանոն, հանդերձ 'ի տէր պարծեսցին, և Աստուած մեր ապաւէնն. և ապա զկոչնակն զարկնեն և ժողովուրդն սկսի ժամ գալ. և կարգին տէրն կարդայ զԱմաւուրքն։ Եւ կայ 'ի դռան քով պապի[1] տեղ բարձր տասնուեօթը սրայ նեղ, և անդ դնեն ըխտաւորք զբաբճրնին. և է սրայ կից դուռ մի որ երեք տեղ կ'երթայ. մէկն գինէտունն, մէկն սեղանատունն, և միւսն լիւանն, որ մնին անդ կու թափեն։ Այս տեղս կայ հոր մի որ Մակար ճգնաւորի հոր կոչի. կայ 'ի

1 Հողաթափ։

դէմն չորս ոտք մերտիւէն և նեղ ճամ-
բայ մի, և աստ կայ երկու օտայ. և քիչ
մը յառաջ աջ դիհն կայ մին հոր այլ.
գնաս յառաջ մութ է, և կայ քէմէր
դուռ մի. և սորայ վերան կայ սուրբ նը-
շան. որ ժամանակաւ անդ դեք բնա-
կեալ են եղեր. Թադէոս առաքեալն դը-
բեալ զսուրբ նշանն. և իսկոյն հալա-
ծեալ են անդէն. և ձախ կողմն գինե-
տան դուռն, և անդ վառի ամենայն գի-
չեր կանգեղ 'ի պատիւ սուրբ նշանին.
և 'ի մտանելն 'ի ներս անդ կայ ըրա-
խուռ դուզան մի աջ կողմն, և փոքր հա-
ւուզ մի կից. որ նորա մէջն է պօռուն,
սանքի ֆըչիյի տեղ է. և 'ի ներքոյ սո-
րայ ջրի ճանապարհ է. դիմայն կայ
քացղի բըղուկներ։ Եւ 'ի ներքս եր-
թանք եարան եարան, որ է ցած քէ-
մէր մի. և անդ կայ աջ կողմն քացղի
տուն, և ճառաներու տեղ. անդ կայ հոր
մի որ դռան քովի հաւուզն կ'երթայ
ջուրն. և 'ի ձախ կողմն կայ քէմէր դուռ
մի. որ քովն կայ հոր մի, որ փոքր դուր-
նա ունի պատն. 'ի նա ընուն զլուրն որ
միւս զաղանն կ'երթայ և անդ է ըրա-
խուն տունն. որ ունի բազում ճառա-
ներ լի. և կարպետով զինքեանք ծած-
կեալ կան. բազում թէֆարիք դուռմ-
դուռմաներ, և զայն ըստ կարգի։ Եւ
կայ սորայ դուռն դէմ փէքէ մի. որ անդ
պառկի գինէպանն ով որ իցէ և ունի
փոքր պատուհան մի։ Եւ 'ի դիմաց սո-
րայ սուրբ Աստուածածնայ պատկեր
մի. և 'ի դուրս ելանելն որ գինետունն
դիմացդ է, ձախ կողմն ունի փէքէ մի
տասը տախտակէ է տէօշէմէն։ Ապա
մտնունք եղբայր գինետունն և կայ անդ
աջ կողմն երկու կիւղ առուռ դաղան. և
թէ կաս նէ չորս է դատարկ որ 'ի ժա-
մանակի լուսաւորեալ հոգի Գրիգոր
պարոն տիրոջն՝ սիվիլեայով լի է եղեր.
և 'ի սորայ քովն հնծան, երկայնու-
թիւնն քսանուերկու ոտք և լայնու-
թիւնն տասնեվեց ոտք, բարձրութիւնն
չորս թիզ. և ունի երկու կողմն երկու
պատուհան բարձր և լայն. որ դրսէն
կիշեռեն[1] զիսաղողն և զէմպելով աստի
տան ներս, որ ընուն 'ի հնծանն. և կայ
սորայ քով հաւուզ մի հընծանին կե-
սուն չափ. որ խաղողին շիւն անդ լը-
նուն և 'ի դիմաց սորայ փոքր նեղ և եր-
կան հաւուզ մի. որ անդ շինեն ըզ-
քացախն։ Եւ մտանելք երրորդում դրա-
նեն 'ի ներս, որ է գինէտանն մայրը.
և 'ի մտանելն 'ի ներս աջ կողմն փոքր
եղեր հաւուզ մի. 'ի սորա ծարն հոր մի.
որ անդ վազէ շիրան, և 'ի բերան հո-
րոյն՝ քըլթոց դնեն և անտի առնեն ըզ-
շիրան կիւկիւմներով. և անդ կայ մահ-
առուէն եօթը կիւկիւմ վասն շիրայի
համար, և ընուն 'ի փրչիներն. և կայ 'ի
միջի սորայ քառասուն ֆըչի կամ ա-
ւելի, հինգ հինգ երկաթ չէմպէրով. ոմն
Ստամպոլու եկեալ. և ոմն Լեհու եկեալ.
և ոմն ֆըրէնկիստանու. և կայ սրայով
պոռուռնա տիրէկներ. և 'ի ներքոյ տի-
րէկներուն հաստատեալ են խոշոր քա-
րով բարձրութիւնն երեք թիզ, և ամէն
ֆըչիյի առաջև մէկ մէկ տաշտ են եդեալ.
և է սորայ տէօշէմէն միզանով շինեալ.
որոյ կողմանէ արձակէ ֆըչին թափան,
թէ դիշեր կամ ցորեկ գըտանէ զինքըն,
կայ խոր մեծ հոր մի որ մէկ տամլա զայ
չիլինար, շուտով գտանէ զհորն. և ունի
չորս կողմն ըրաֆներ, որ անդ շարեալ
են գինու փարչ մանտոր և խոշոր, և ճա-
ռաներ, և կայ անդ պատն 'ի վայր կա-
խեալ զէնձիլ, որ արծաթին նման կու
փայլէ՝ և է երկայնութիւնն եօթը ղու-
լաճ մինն. և ութը ղուլաճ միւսն. որ 'ի
դիպող ժամու զֆչիքն նորանով կու
լուանան։ Այս ամէն պատմածս եղբայր
'ի միտ առիր, թէ որչափ բան է այս
ֆըչիքն մէկզմէկու կից չեն, այլ արա-
լըիրն բաց է. և մէկ սրայ չեն, 4 զաթ
է. այս մէյտան տեղն չորս տիրէկի վե-
րայ է. մալում լինա քեզ։ Եւ կայ 'ի մի-
ջի սորայ տասնումէկ կանգեղ կախեալ
որ նոր լցեալ ժամանակն կու վառեն.
և կայ դռան ղոլթուխիւն կանգեղ մի որ
հանապազ կու վառի. և ունի քէմէր-
ներ և կայ մէջ տեղն տափակ մեծ լու-
սամուտ մի երկաթ փէնճէրէով։ Եկ եղ-
բայր գինէտունէն դուրս ելէնք, զի-
րա գինէպանն զմեզ զինովցուց։ Եւ է

1 Կը կշռեն։

Գինէտանն դրան դիմացը մութ քէմէր մի. ձախ կողմն փայտի տուն երկու դաթէ որ անդ խտիֆ անեն զփայտն մինչ որ 'ի դուռն դայ. և գիտենան որ տաբեգլուխն կու օգտէ։ Կայ սակաւ մի յառաջ փոքր դուռ մի քէմէր. և 'ի քովն սորայ՝ ղազանի օտան. և սակաւ մի յառաջ գործելու տունն. և 'ի դիմաց սորայ երկու հանգստարան. և կայ անդ տասը ոտք մէրտէւէն. 'ի վեր ելանելն 'ի բաց կայ մեծ քէմէր մի, որ լիւան կոչի, որ թարգմանի մոմխանայ. առաջքն բաց, անդ թափեն զմոմն, և կայ սորայ առջևն փոքր սէթ հողէ. և 'ի սէթն մէջ տեղն տիւզ մէրմէր մի, որ զմոմն անդ փէրտահ կ'անեն. սորայ կռնակն մեծ օտայ մի, զինչ և իցէ անդ դնեն, և քովն պզտի դուռ մի. ներս մըտանես աջ կողմն ճրկէ դուռ մի այլ, որ մոմին օտան է. անդ կայ սնտուկներ և տօլապ. երկու մոմն մէկ փարայ՝ պաշխայ է, փարանոցն՝ պաշխայ է, և զամենայն պապէթոցն լրցեր են մինչև 'ի բերան սընտուկացն. և սօլէրն կախեալ կայ անդ, որ միաբանից կուտան։ Եւ այս լիւանն նշխարք գործած ժամանակն տեսանես, որ մեծ պահուց երկոքում շաբթուն երկուշաբթի սկսեն մինչև ուրբաթ հաղիւ կու վճարեն։ Ալիւրն որ կու հարցանես, ընդ ամէնն տասուերկու քիլայ է, մինչև քառասուն հոգի կու նստի կամ թէ այլ աւելի, շահայով քիշքիշրտիւով շէնլիքով կու գործեն ոտաց վերայ. այլ հինգ վեց հոգի սինեստանով կու տանեն եփողին. եփողն երկու հոգի է, մինն Պապիկն և միւսն Յովակիմն. և ջախջի քարէ յերլէ ծեփած է. ներքևն օճախ կու վառեն և ներքոյ վերն՝ դիմացէ դիմաց նստեալ կու եփեն. և պարոն ոմն կ'առնէ զէնպիլով տանի ներս սվռէ։ Եւ 'ի մօտ զատկին ծախեն ըխտաւորաց վեցն 'ի փարայ մի։

Այս լիւանին առջևն պախչայ մի կայ փոքր, և սորայ քովն չորս զատէմէ, և է փոքր տանիս մի. և իջնելն 'ի վայր պէրպէրի ղանութ մի, տարտախլրիի[1] տեղ, նստելու տեղ, սիրիլ կախելու տեղ, շէնէկի տեղ. և այլ ինչ որ պիտոյ է սափրիչին, որ ատեն մի Պապիկն այն օտան զմիաբանքն կու ածիլէ եղեր։ Եւ սայ խանութին մէջ տեղն կայ փոքր օտայ մի. սորայ քովն պուճախ տեղն հոր մի, և քովն փոքր մութվախ մի. սորայ յետևն սուրբ Ստեփանոսին խորանին կռնակն է։ Եկ դուրս, սիրելի, եկ լիւանին առջև. աջ կողմն նշխար եփելու տեղն. և սորայ քով փոքր դուռ մի. ներս մուտ մեծ օտան չուխայի և ունի չորս երկաթ տափակ չէնպէր, և զինճիլ. 'ի վերայ սորայ մեծ կղպակ մի, և ունի երկու ֆրէնկ քիլիտի, և կայ քովն մէկ փոքր օտայ մ'այլ. և ունին առաջևն թզենի ծառ մի. դրսի դիհն աջ կողմն ճկէ, գնայ ներս. երկու դատէմէ, քանևմէկ ատրմ երկայնութիւն. անդ է մոմճի Սրապին օտան երկու. և անդ է իմիրզէ սօլկարին տօլապն ներքևով և վերայով, և է օտայ մ'այլ որ իմիրզէն անդ կու նստի. իջի վայր գնա դուրս։ Այսուհետև ելանելոց եմք սեղանատունն և տանիս։

Կը շարունակուի։

Սիւէզի ջրանցքը և Իտալիա.

(Տես էջ 138։)

Սիւէզի պարանոցը, ջրանցքին պեղմանն համար որոշեալ տեղը, հիւսիսէն դէպ 'ի հարաւ 150 հազարամէջը երկայնութիւն ունի. իսկ ջրանցքին երկայնութիւնն 160 հազարամէջը է՝ տեղ տեղ ուղղութենէն խոտորած ըլլալուն պատճառաւ։

Այս երկայնութեան վրայ 18 հազարամէջը տեղ մը կայ՝ որուն մէջ պարունակուած երկիրն գրեթէ խաղաղ ծովուն հարթութեան կը հաւասարի, կամ քանի մը տասնորդամէջը աւելի բարձր է. ծովուն երեսէն 36 հազարամէջը տեղ բարձր է մէկ մէջրէն առառաւելն մինչև 19, բայց քիչ տեղ.

[1] Սանարերու տեղ։